Հալիձոր

Բնակչություն՝ 602

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 74 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 23 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1250 մ:
Հալիձոր անունը ծագել է Հաբանդ գավառի Հալե, Հալիս կոչվող բնակավայրերի անվանումներից: 10-րդ դարի սկզբին իշխանուհի Համազասպուհին Հալիձորը նվիրաբերել է Տաթևի վանքին, որի կալվածքն է եղել մինչև 19-րդ դարը:Գյուղի Սբ. Մինաս եկեղեցին՝ կառուցված 1611թ., կանգուն է: Գյուղից 2 կմ հարավ-արևմուտք գտնվում է նշանավոր Հարանց Անապատը, շրջակայքում են «Խաչին խութ» կոչվող եկեղեցին, «Հալիձոր» գյուղատեղին, «Պողոց-Պետրոս» մատուռը, ինչպես նաև բազմաթիվ խաչքարերով գերեզմանոցը:
Որոտանի ձախ ափին, այգիների մեջ պահպանված է ժայռաբեկորի վրա կանգնեցված 1265թ. կալվածագիր արձանագրություն: Ներկայիս Հալիձորը կառուցվել է 1966թ. և մինչև 1991թ. գտնվում էր Հարժիսի խորհտնտեսության կազմում:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 109 գյուղացիական տնտեսություն:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 2777 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1456 հա, որից՝
- վարելահող՝ 514 հա, բազմամյա տնկարկ՝ 22 հա, արոտ՝ 98 հա, այլ հողատեսք՝822

հա
- բնակավայրերի հողեր՝ 28 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 2 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 7 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 973 հա,
- անտառային հողեր՝ 308 հա, որից անտառածածկ՝ 308 հա
- ջրային հողեր՝ 3 հա